

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

(Պ. Ա. Մանդեւսամի Յօդւածի առքիւ)

Մենք սկզբով տեղ աւենք «Վէմ»-ում պ. Ա. Մանդէլշտամի հետաքրքրական յօդւածին։ Իր մտաւոր հարուստ պաշարով եւ բացառիկ հմտութեամբ պ. Մանդէլշտամն աւելի քան որեւէ մէկը է վեճակի է խօսելու ընդհանրապէս թիւրքիայի եւ մասնաւորապէս հայկան խնդրի մասին։ Սակայն, պ. Մանդէլշտամը ոչ միայն ձեռնշաւ պատմաբան եւ իրաւագէտ է, այլև՝ ոռւս հայրենասէր մարդ։ Այս վերջին հանդամանքը, երբեմն անդրագանում է նրա պատմական գնահատութիւնների վրա։

Մենք ի նկատի ունենք պ. Մանդէլշտամի բացասարութիւնները ցարական սուսասանի կատարած զերի մասին հայկական բարենորոգումների հարցում։ Դուքս է զալիս, ըստ պ. Ա. Մանդէլշտամի, որ ցարական զիւանագիտութեան միակ նպատակը – անշահախնդիրը ու մարդասէր – եղել է բարենորոգումների կիրառումը։ Հայաստանը գրաւելու մասգրութիւն չի ունեցել Ռուսաստանի։ Եւ միայն զաշնակիցների, զիւանորագէս ֆրանսայի պնդումի վրա տեղի է տևել եւ համաձայնել Հայաստանի բաժանման եւ արեւելեան մասի գրաւման։ Դժբախտաբար, մենք ոչ մի կերպով չենք կարող համաձայնել պ. Մանդէլշտամի, այս կարծիքին։ Եւ արդէն փաստերն էլ հակասակն են ցոյց տալիս։

Մի բան, ի հարկէ, ճիշտ է. 1912.14 թւականներին միջազգային կացութիւնը եւ Ռուսաստանի ներքին վիճակը այնպէս էին, որ Հայաստանի գրաւման պահանջը առարկայօրէն անհնար էր զնել ոռւս քաղաքականութեան համար։ Այդ անհնարութեան հետեւանքով էր, անշուշա, որ ոռւս զիւանագիտութիւնը ձեւացնում էր, թէ քաջալերում է Հայերի ինքնագարական ձգտումները։ Ռուս զիւանագիտութեան իսկական վերաբերումը, սակայն, բոլորովին այլ էր. նա յըտակ կերպով արտայարուած է պ. Սաղոնսի բերանով, 1915-ին, երբ խօսակցութիւնները հայ ներկայացուցիչների հետ Հայաստանի ինքնագարութեան մասին որակում էին սրբէս «զուտ ակագէմական բնոյթ» ունեցող 1912-ին Ռուսաստանը անհրաժեշտ էր Համարում քաջալերել Հայկական բարենորոգումների ծրագիրը եւ նոյն իսկ Հայերի մէջ ինքնագարութեան յոյսեր օրորել, բայց, ի հարկէ, լուրջ ինքնագարութեան մասին նա չէր մտածում։ Այս ինդրում թիւրք-զերմանական կասկածները, անշուշա, անհիմն չէին։ Բանաւը էին եւ Հայկական բայն ըրջանների վախերը, թէ Ռուսաստանը,

ի վերջոյ, միտք ունի գրաւելու թիւրքահայաստանը :

Որ ոռւս դիւանագիտութիւնը բնաւ անշահախնդիր չէր հայկական հարցում, ցոյց տւեց այն, կարելի է ասել, սիրալիք յօժարակամութիւնը, որով նա, պատերազմի ընթացքին, «տեղի տւեց» Փրանսական բաղձանքների առջեւ։ չկայ ո՛չ մի փաստ, որ հաստատէր, թէ Խուսաստանը պաշտպանած լինէր Հայաստանի ինքնավարութեան պահանջը։ Նրա ձեռներէցութիւնը այդ ասպարէզում «ակադէմական խօսակցութիւնից» այն կրղմը չի անցել։

Եթէ ոռւս քաղաքականութեան համար Հայաստանի ինքնավարութիւնը լինէր նպատակ եւ ոչ սոսկ դիւանագիտական միջոց, ո՛չ մի պատճառ չկար, որ Հայաստանի ինքնավարութեան ծրագիրը գուրս նետէր Խուսաստանի պատերազմական նպատակներից։ Կիլիկիայի գրաւումը Փրանսացիների կողմից արգելք չէր կարող լինել ինքնավար Հայաստանի ստեղծման արեւելիան վիրայէթներում։ Ընդհակառակը, Խուսաստանը իրական անշահախնդրութեան և մարդասիրութեան օրինակ ցոյց տւած կը լինէր, եթէ 1914 թ. սարենորոգումների սահմաններում ամփոփւած Հայաստանը վերածէր ինքնավար միաւորի, հէնց իր՝ Խուսաստանի հովանաւորութեան ներքոյ։ Կասկած չկայ, որ գաշնակիցները չէին հակառակի նման մտադրութեան։ Ընդհակառակը, կը քաջալերէին։

Եղաւ, սակայն, բոլորին հակառակը ցարական գիւանագիտութիւնը ցոյց տւեց նւաճողական պետական յատութիւններին յատուկ ընչասիրութեան սովորական մի օրինակ։ Նա հանդիսացաւ մէկը Հայաստանը երկու մասի բաժանողներից և ձնորի տակից քաջալերելով հայերին, գաղտնի գաշնագրով ապահովեց Հայաստանի գրաւման ծրագիրը։ Մի՞թէ յուրջ կերպով կարելի է խօսել այն մասին, թէ Փրանսացիների պարտադրանքի տակ է որ Խուսաստանը համաձայնեց գրաւել Հայաստանը։ Խոկ պ. Մանդէլշտամի գատողութեան եղանակը այդտեղ է տանում։

Ո՛չ, պատմական փաստերի այսօրւայ լոյսի տակ, պարզ երեւում է, որ Թիւրքահայաստանի գրաւման ծրագիրը մէկ մասն էր այն քաղաքականութեան, որ «պատմական անհրաժեշտութիւն» էր նկատում Խուսաստանի համար եւ յանուն որի ազգ եւ աղինք բռնի ուժով մտցուում էին ցարական կայսրութեան սահմանների մէջ։ Հայաստանը բացառութիւն չկազմեց, դժբախտաբար։

Թէ Հայաստանի բռնագրաւումը նախորոշւած ծրագիր էր ցարական Խուսաստանի համար, կարելի է բերել եւ ուրիշ փաստեր։ Հէնց պատերազմի առաջին օրերին կովկասում տեղի ունեցող դէպքերը միթէ բաւական չեն հաստատելու համար, որ ոռւս կառավարութիւնը

Թիւրքահայաստանը նկատում էր որպէս ապագայ ոռւսական երկիր : Հողաբաժանման այն ծրագիրները, որոնք կային Լազիստանի ու Տրավելիոնի ծովեղերքի նկատմամբ, եփրատեան կազակութեան հաստատումը եւ կոմ «Թիւրքիայից դրաւած շրջանի ժամանակաւոր վարչութեան» տիրահոչակ կազմակերպութիւնը - մի՞թէ որեւէ կասկած կարող են թողնել ուսւ կառավարութեան խկական դիտաւորութիւնների մասին :

Արդ դիտաւորութիւններն իրենց յստակ արտայայտութիւնը ստացան, մանաւանդ, Հայաստանի ինքնավարութեան մասին «ակադէմական խօսակցութիւններ» անող Սագոնովի եւ Կովկասի փոխարքայ մեծ իշխան Նիկոյայ Նիկոյայեւիչի միջեւ փոխանակւած երկու նամակների մէջ : Ամբարն պերճախօս է այդ գրագրութիւնը եւ այնքան «անշահամենդիր», որ, կարծում ենք, որեւէ մեկնաբանութեան պէտք չունի : Մենք կր սահմանափակւենք միայն այդ երկու վաւերագրերի թարգմանութեամբ : Այդպիսի փաստերի գոյութիւնը բաւական է, որպէսզի ցարական դիւանագիտառութիւնը Հայասիրութեան մասին խօսք չանէ :

Առաջին փաստաթուղթը արտադին գործոց նախարար Ս. Գ. Ստանովի (14)27 յունիս, 1916 թ. № 540 նամակն է՝ ուղղված Կովկասի փոխարարայ մեծ իշխան Նիկոյոյ Նիկոյայեւիչին : Ահա այդ նամակը .*)

«Համարեա բովանդակ Հայաստանի դրաւումը մեր գօրքերի կողմից եւ բառաջիկայ կցումը Ռուսական Կայսրութեան՝ հերթի են դրնում այդ շրջանի ապագայ կազմակերպութեան հարցը : Թէեւ այժմ, մինչեւ պատերազմի վերջանալը, գուցէ եւ վաղաժամ է փորձել նրանց անդամներ երկրում հետեւելիք մեր ներքին քաղաքականութեան որոշ ու ստորդ հիմքեր հաստատելը, բայց եւ այնպէս ինձ շատ օգտակար է թւում հէնց այժմւանից որոշել մեր վերաբերումի ղեկավար սկզբունքները, մանաւանդ որ այժմ արդէն մշակւած է եւ չուտով գործադրութեան պիտի դրւի Թիւրքիայից պատերազմի իրաւունքով դրաւած շրջանների ժամանակաւոր վարչութեան օրէնքի նախագիծը :**))

Առաջադրւած ինդրում ամենամեծ դժւարութիւնն ու բարդու-

*) Թէ այս եւ թէ փոխարքայի նամակը իրատարակւած են «Ասիական Թիւրքիայի բաժանումը» հատորում, էջ 207-12 :

**) Սա այս օրէնքն է, որ հաստատւեց Գերագոյն Սպայակայտի վետ զօր. Մ. Ալեքսեյի 1916 թ. յունիս 5 № 739 իրամանագրով եւ որի նիման վրա Թիւրքիայայտանի գրաւած մասերը ենթարկւեցին ուստացման :

թիւնը ներկայացնում է հայկական հարցի լուծումը։ Առաջ իր ամբողջ ծաւալով՝ նա մի քիչ դուրս է զալիս ուսւ ներքին պետական կեանքի սահմաններից թէ՛ իբրեւ հետեւանք այն առաջաւոր միջազգային գերի, որ բաժին ընկաւ Ծուսաստանին հայկական բարենորոգումներ մտցնելիս եւ թէ այն պատճառով, որ հայերի մի մասը կը մնայ Փոքր Ասիայում, մի ուրիշ պետութեան իշխանութեան տակ։ Մեղ փոխանցուղ հայկական նահանգների ապագայ կաղմակերպութեան ժամանակ մենք չենք կարող հաշւի չառնել այս երկու հանգամանքները։ Ուստի թոյլ կը տամ ինձ ներկայացնելու ձերդ կայսերական բարձրութեան բարեհայեցողութեան հետեւեալ նկատումները։

Ինչպէս յայսնի է, իբրեւ ծայրայեղ նշանակէտեր, որոնց միջեւ մեղ մօտ սովորաբար դրւում է հայկական հարցի լուծումը, հանդիսանում են երկու հոսանքներ՝ մէկը հայ ազգայնականների ձգտումն է լիակատար ինքնավարութեան Ծուսաստանի հովանաւորութեան տակ, 1913-ին մեր առաջարկած բարենորոգումների ողով, իսկ միւսը՝ հակառակ հոսանքն է, որ հայերի քաղաքական արժէքը իջեցրնում է զէրօյի եւ փորձում է նրանց տեղը դնել մահմեղականներին։

Ինձ թուում է, որ հարցի լուծումը մէկ կամ միւս ուղղութեամբ բնաւ չի համապատասխանում Ծուսաստանի պետական շահերին՝ ոչ ներքին եւ ոչ էլ արտաքին քաղաքականութեան տեսակէտից։ Ինչ վերաբերում է հայերին յայն ինքնավարութիւն տալուն, չպէտք է մոռնալ, որ Ծուսաստանի կողմից նւաճւած Մեծ Հայաստանում, հայերը երբեք մեծամասնութիւն չեն կազմել, իսկ պատերազմի ընթացքին նրանց վերաբերմամբ թիւրքերի կիրառած հէնց հայերի վրկայութեամբ ահաւոր պատժիչ միջոցներից յետոյ, այդ փոխյարարերութիւնը աւելի եւս փոխւել է ոչ ի նոպաստ հայերի, որոնք այժմ հաղիւ աղդաբնակութեան մի քառորդ մասն են կաղմում։ Այս պայմաններում հայկական ինքնավարութիւնը իրավէս կը յանդի մեծամասնութեան սորկացման փոքրամասնութեան կողմից։

Միեւնոյն ժամանակ, կարելի չէ հաշտւել այն կարծիքի հետ, ըստ որի հայ տարրը պէտք է զոհարելու մահմեղականութեան եւ այդ երկու տարրերի միջեւ մղող պալքարում կառավարական իշխանութիւնը պէտք է բանէ վերջինիս կողմը։ Այդ պիտի նշանակէր հայերին դնել աւելի վաս դրութեան մէջ, քան նրանք ունէին թըրքական տիրապետութեան տակ, եւ սախզել նրանց նախանձով նայել արտասահմանեան իրենց աղքակիցներին, որոնք այսպէս կամ աղքակի վայելեն զարգացման ազատութիւն։ Բացի այդ, ինդրի նման լուծումը կարող է Ծուսաստանին դնել անյարմար միջակի մէջ, քանի որ բոլոր պետութիւններից նա ամենից աւելի մեծ ե-

ուսնդով պաշտպանել է հայկական լայն բարենորոգումների գործադրութիւնը թիւրքահայաստանում :

Այս նկատումներով ինձ թւում է, որ լաւագոյն ելքը մեզ համար կը լինի այն, որ Թիւրքիայի նորանուած շրջանները կազմակերպելիս մենք առանձնապէս խիստ կերպով դեկավարւենք օրինապահութեան, արդարութեան սկզբունքներով և բոլորովին անաշատ վերաբերում ցոյց տանք դէպի երկրի բոլոր այլացեղ տարրերը, առանց մէկը միւսին հակաղը ելու և առանց ժողովրդներից որեւէ մէկին բացասիկ հովանաւորութիւն ցոյց տալու ի վնաս ուրիշի : Այդպիսով հնարաւոր կը լինէր հայերին տրամադրել որոշ սահմաններով, գպրցական և եկեղեցական ինքնուրոյնութիւն, լեզւից օգտաբելու իրաւունք, այլեւ քաղաքացին ու գիւղական ինքնավարութիւն, պարմանով, որ ընտրութիւնների ժամանակ պահւի ազգարբնակութեան տոկոսային համեմատութիւնը : Նոյն սկզբունքները պէտք է կիրառել եւ ոչ քրիստոնեայ տարրերի վերաբերմամբ, որքան այդ թոյլ կը տան տեղական պայմանները եւ նրանց մշակութային զարգացման աստիճանը : Վերեւ յիշւած ժամանակաւոր օրէնքի նախադիծը արդէն կանոնաւմ է այդ տեղակէտի վրա եւ որոշ չափի ինքնավարութիւն է տալիս «գիւղական համայնքներին» և «գիւղական շրջաններին» :

Օրինապահութեան և անաշառութեան նոյն սկզբունքը պէտք է պահպանել եւ հողային ու գաղթականութեան հարցի լուծման ժամանակ : Այդ տեսակէտից շատ անհրաժեշտ է խիստ քննութեան ենթարկել վերջերս տեղի ունեցած բազմաթիւ դէպքերը, երբ մահմեդականները ինքնակամ կերպով յափշտակել են տարագրւած կամ սպանւած հայերին պատկանող գոյցերը, պէտք է վերականգնել իսկական սեփականատէրերի կամ նրանց ժառանգորդների իրաւունքները :

Իմ խորին համոզումով, վերոյիշեալ սկզբունքների կիրառումը կեանքի մէջ տեղական պաղաքնակութեան կը ներշնչէ հաւատ գէպի տեղական իշխանութիւնը, կը խլէ ամէն հող ներքին եւ արտաքին ամէն տեսակ անառողջ գրգռութեանց համար եւ տեղական բնակչութեան համար կը ստեղծէ կեանքի այնպիսի պայմաններ, երբ նա առանց ցաւի կը յիշէ թիւրքական տիրապետութեան անցած ժամանակները :

Կովկասիան փոխարքայ մէծ իշխան Նիկոլայ Նիկոլայենի 3)16 յուլիս, 1916 թ. № 21083 նամակը արտաքին գործոց նախարար Ա. Դ. Սազոնովին .-

Սերգէյ Դմիտրիեվիչ,

Ի պատասխան Զեր ։ 4 յունիս № 540 դիմումի, ես լիովին համաձայն եմ Ձեզ հետ, որ խիստ ցանկալի է ՀԵՆԴ հիմա, պատերազմը վերջացնելուց առաջ, գծել՝ պատերազմի իրաւունքով գրաւած Թիւրքիայի հողերը Ծուսական Կայսրութեան սահմանների մէջ մտցնելու հարցի ղեկավար սկզբունքը, եւ հիանալի կերպով գիտակցում եմ հայկական հարցի լուծման բարդութիւնն ու դժւարութիւնը։

Հայկական հարցը, իմ խորին համոզումով, բոլորովին գոյութիւն չունի ներկայ Ծուսական Կայսրութեան սահմաններում եւ նոյն իսկ չպէտք է թոյլ տալ, որ արդ մասին լիշտակութիւն լինի, որովհետեւ ոռուսահպատակ հայերը փոխարքայութեան մէջ մահմեդականներին, վրացիներին եւ ոռուսներին հաւասար իրաւունքներ ունեցող ոռուս հպատակներ են։ Ես կարծում եմ, որ ինձ վատահւած կովկասեան երկրում իշխանութիւնը պէտք է ձգտի, առանց բացառութեան, բոլոր ազգերի հաւասարութեան, եւ չեմ կարող ծածկել, որ երկրում մինչեւ այժմ եղած ազգային բախումների մէջ, լուրջ աղդեցութիւն է ունեցել, թերեւս անգիտակցարար, երկրային իշխանութեան բռնած ուղղութիւնը։ Դարաւոր հակամարտութիւնն ստեղծած արդ շփումները կը վերացւին, երբ իշխանութիւնը անխախտ կիրպով գիտակցի, որ կովկասում ապրող բոլոր ժողովուրդները պէտք է օգտեն ոռուսահպատակի միեւնոյն իրաւունքներից եւ հաւասարապէս մօտ են ոռուս ցարի սրտին։

Այս ամենի հիման վրա, պետական տեսակէտից, ես կարծում եմ, որ հայկական հարցը որպէս այդպիսին դոյութիւն ունի միայն կայսրութեան նախապատերազմական սահմաններից դուրս, այսինքն՝ ներկայումս մեր դրաւած թրքական վիլայէթների շրջանում։

Անցնելով Զեր արտայարտած կարծիքի էութեան՝ ես խիստ ուրախ եմ, որ իմ տեսակէտը ամբողջապէս համապատասխանում է Զեր արտայարտած նկատումներին։

Ի հարկէ, Ծուսաստանը, որ ամենից մեծ եռանդով պաշտպանել է Թիւրքահայաստանում լայն բարենորոգումներ մտցնելը, չի կարող հաշւի չառնել այն տառապանքները, որ ներկայ պատերազմի ընթացքում կրել է հայ ժողովուրդը իրրեւ հետեւանք մահմեդուկան ճնշումների։ Կասկած չի կարող լինել որ Թիւրքիայի նորանրաւած շրջանները կարդաւորելիս ամենախիստ կերպով պէտք է հիմք գնել օրէնքի ու արդարութեան եւ կատարեալ անաչառութեան դէպի գրաւած շրջանում ապրող բոլոր ժողովուրդները։ Ի հարկէ, առանց շշափելու Հայաստանի ինքնավարութեան հարցը Ծուսա-

տանի հովանաւորութեան ներքոյ, մի հարց, որ ամենայն հաւանականութեամբ դեռ եւս կեանքի չպիտի կոչէի եւ, իմ կարծիքով, կարող է միայն վտանգաւոր կերպով բարդացնել ներկայ պատերազմի ընթացքին ծագած խնդիրների լուծումը, ես լիովին համամիտ եմ Ձեզ, որ հարկաւոր, եւ ըստ ամենայնի հնարաւոր է տրամադրել հայերին դպրոցական ինքնավարութիւն եւ եկեղեցական ինքնուրութիւն, եկեղեցական դրամագլուխների եւ գոյքերի վարչութիւն, լեռնեց օգտւելու իրաւունք, պայմանով սակայն, որ ոռւսական բարբառին արւել նախապատութիւն բոլոր պաշտօնական դէպքերում, այլեւ քաղաքալին ու գիւղական ինքնավարութիւն՝ պահպանելով ընտրութեանց ժամանակ աղդաբնակութեան տոկոսային համեմատութիւնը։ Ոչ-քրիստոնեայ տարրերի նկատմամբ էլ պէտք է կիրառել նոյն սկզբունքները՝ համաձայն տեղական պայմանների եւ նրանց մշակութային զարգացման աստիճանի։

Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ տեղական հողի օգտագործման եւ գաղթականութեան հարցի լուծման ժամանակ պահելի նոյն օրինականութիւնն ու անաշառութիւնը, ես, իհարկէ, ամբողջապէս միանում եմ Ձեր արտայայտած կարծիքին։ Ապացոյց, որ իմ կարծիքը համերաշխ է Ձերինին, կցում եմ սրան ի գիտութիւն Ձեր իմ այս տարւայ 19 մարտ № 121 հրամանի պատճենը, որով արգիւլում են բոլոր ինքնակամ դրաւումները մեր նւաճած թրքական չըրջաններում։

Ի վերջոյ, չեմ կարող լոել, որ աչքի առաջ ունենալով մեզ մօտ հասունացող պարենաւորման տափնապի յուրջ վտանգները, որոնք ժանրը հետեւանքներ են սպառնում թէ բանակի եւ թէ Կովկասեան երկրի համար, ես չեմ կարող չդարձնել ամենամտահոգ ուշադրութիւն՝ վերացնելու համար այդպիսի մի ծանր վտանգ, ուստի հինգ այժմւանից հրամայել եմ քննութեան առնել հայ փախստականների թիւրքիայի գրաւած չրջանների իրենց տեղերը վերադառնալու խրնդուր, այն պայմանով, որ հնարաւորութիւն տալով նրանց նորից ամրանալ իրենց հարազատ հողերի վրա՝ մեծապէս թեթեւացւի փախրստականների պարենաւորման վրա եղած ծախսը եւ միաժամանակ կեանքի կոչւեն թիւրքահայաստանի արդաւոնդ հողերը, մի բան, որ, անշուշտ, յուրջ թեթեւացում կը պատճառէ բանակի պարենաւորման դործին։ Խորապէս Ձեզ յարգող՝ Նիկոլայ։»

«Դպրոցական ինքնավարութիւն» եւ «եկեղեցական ինքնուրութիւն» - այս ելքին յանդեց ոռւս գիւղանագիտութեան դործնական ծրագիրը հայկական ինդրում։ Աւելի պերճախօս «անշահասիրութիւն» կարելի՞ է երեւակայել։

ԽՄԲ. «ՎԵՄ»-Ի